ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ
ՆԱԽԱՐԱՐ
Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

«17» 11 2020թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 000111

Ձեռնարկողը՝ *«Էյ Սի Գրուպ» ՍՊԸ*
ք. Երևան Նոր Նորք վ/շ. Ջուղայի փ.4, բն. 49

Գործունեությունը՝ ***Ջրվեժ համայնքի, Ջրվեժ գյուղի 49-րդ փողոցի թիվ 36 և 38-րդ փողոցի թիվ 1 հասցեներում նախատեսվող Սմարթ Սիթի բնակելի թաղամասի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ***
Կոտայքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնակատար՝ Ա. Թարգյան

Առդիր եզրակացությունը՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 000111

<17> 11 2020թ.

Կոտայքի մարզի, Ջրվեժ համայնքի, Ջրվեժ գյուղի 49-րդ փողոցի թիվ 36 և 38-րդ փողոցի թիվ 1 հասցեներում նախատեսվող Սմարթ Սիթի բնակելի թաղամասի կառուցման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ

Ներածական մաս.

Ձեռնարկող՝	«Էյ Սի Գրուպ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ /Գ կատեգորիա/
Գտնվելու վայրը՝	Կոտայքի մարզ, գ. Ջրվեժ

ՀՀ Կոտայքի մարզի Ջրվեժ համայնքում՝ գ. Ջրվեժի 49-րդ փողոց թիվ 36 և 38-րդ փողոց թիվ 1 հասցեներում նախատեսում է իրականացնել «ՍՄԱՐԹ ՍԻԹԻ» բնակելի թաղամասի կառուցման աշխատանքներ: Շինարարության 1-ին փուլի համար 24.01.2020թ.-ին տրված N02 նախագծման թույտվության համաձայն կազմվել է նախագիծ, որի համաձայն 25.03.2020թ. տրվել է N22 շինարարության թույտվություն, 2-րդ փուլի շինարարության համար 16.06.2020թ.-ին տրվել N78 նախագծման թույտվությունը:

Գործունեության նպատակն է կառուցել ժամանակակից բնակելի թաղամաս, որտեղ առկա կլինեն առանձնատներ և մանսարդային եռահարկ շենքեր:

Համաձայն սեփականության վկայականների՝ կադաստրային ծածկագիր 07-057-0315-0072՝ հողամասի նպատակային նշանակությունը կամ հողատեսքը՝ բնակավայրերի է, գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ բնակելի կառուցապատման, գրանցված իրավունքի տեսակը՝ սեփականություն

Նախատեսվող գործունեությունը համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի ա. Ենթակետի, հանդիսանում է Գ կատեգորիայի գործունեության տեսակ:

Նկարագրական մաս. Սմարթ Սիթի թաղամասն առանձնացված պարսպապատ փակ թաղամաս է, որը կառուցվում է Գլոբալ Ռիլլ Իսթեյթ ընկերության (կապալառու-կառուցապատող) կողմից՝ շինարարական թիվ 16594 լիցենզիայի, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից թաղամասի կառուցման հավանության և հանձնաժողովի

համապատասխան շինարարական թույլտվությունների հիման վրա: Թաղամասը կառուցվում է 12,537 մ2 հողատարածքի վրա:

Նախատեսվում է կառուցել 24 առանձնատներ և 4 եռահարկ բազմաբնակարան շենքերը (մանսարդային և նկուղային հարկերով): Շինությունները զբաղեցնում են ընդհանուր տարածքի 3,606 մ² մակերեսը կամ ընդամենը 29%-ը: Թաղամասն ունի 6,879 մ² ընդհանուր օգտագործման ճանապարհներ, մայթեր, կանաչապատ գոտի և խաղահրապարակներ:

Նախագծի կոնստրուկտորական մասը մշակված է մոնոլիտ երկաթբետոնե կոնստրուկցիաներով:

Առանձնատների և եռահարկ մանսարդային հարկով շենքերի որմնախարիսխը բազալտից է, արտաքին ճակատները նախատեսվում է երեսապատել տուֆե և տրավերտինե սալերով, երեսապատել կամ սվաղել ցեմենտ-ավազե շաղախով և ապա ներկել:

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է տարածքը կանաչապատել և բարեկարգել:

Կառույցի տեխնիկա-տնտեսական ցուցանիշներն են՝

- հողամասի ընդհանուր մակերես՝ 1.253742հա,
- մենատների/ առանձնատների կառուցապատման մակերեսը՝ 2364 մ²
- մանսարդային եռահարկ շենքերի կառուցապատման ընդհանուր մակերեսը՝ 3294 մ²
- ընդհանուր օգտագործման ճանապարհներ-մայթեր՝ 2.000 մ²
- կանաչապատ գոտի, խաղահրապարակներ՝ 4.879 մ²:

Շինարարության տևողությունը կազմում է 24 ամիս՝ շինարարության թույլտվության տրամադրման օրվանից:

Բնակելի թաղամասի կառուցման շինարարության ժամանակ օգտագործվում են տարբեր շինարարական նյութեր, այդ թվում երկաթբետոն, սրբատաշ և կոպտատաշ քարեր, փայտ, մետաղ, ապակի, սվաղ, երեսպատման բարձրորակ նյութեր, ավազ, ցեմենտ, ներկանյութ, բետոնյա կոնստրուկցիաներ, մետաղական կոնստրուկցիաներ և այլն:

Բնակելի թաղամասի ջրամատակարարումը և ջրահեռացումը իրականացվելու է համաձայն Վեոլիա Ջուր ՓԲԸ-ի կողմից տրված տեխնիկական պայմանի:

Ջրամիացումն իրականացվելու է նախագծված տարածքի հարևանությամբ անցնող համայնքային ջրագծից, իսկ կոյուղին կմիացվի համայնքային կոյուղատարին:

Ներքին ջրամատակարարման ցանցը նախատեսվում է իրականացնել պոլիպրոպիլենե խողովակներով:

Տաք ջրամատակարարումը և ջեռուցումը նախատեսված է կենտրոնացված: Այդ նպատակով տեղադրվելու է ջեռուցման կենտրոնացված ինվերտորային կաթսայատուն՝ սմարթ համակարգով:

Նախատեսվող բնակելի թաղամասի գազամատակարարումը կիրականացվի համաձայն Գազպրոմ Արմենիա ՓԲԸ-ի կողմից տրամադրված տեխնիկական պայմանի, իսկ էլեկտրամատակարարումը իրականցվելու է Ջրվեժ համայնքի ենթակայանից:

Նախատեսվում է առանձնատների տանիքներին տեղադրել արևային պանելներ էլեկտրաէներգիայի արտադրության համար ըստ բնակչի հայեցողության:

Շինարարական աշխատանքերի ընթացքում առաջացած շինարարական աղբը ամբողջությամբ տեղափոխվելու է տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հատկացված վայր, իսկ կենցաղային աղբը պայմանագրային հիմունքներով կտեղափոխվի մոտակա աղբավայր:

Շինարարական աշխատանքների կատարման ընթացքում անհրաժեշտ է պահպանել շինարարությունում անվտանգության տեխնիկայի վերաբերյալ շինարարական նորմերի և կանոնների պահանջները:

ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀՀ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ENVIRONMENTAL IMPACT EXPERTISE CENTER
02543169
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

Շինարարական աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է իրականացնել տարածքի կանաչապատում: Համաձայն նախագծային տվյալների կանաչապատման մակերեսը կազմում է 4879մ^2: Կանաչապատման ծրագիրը իրականացնելու համար ստեղծվելու է որոշ հատվածներում մինչև 30 սմ հաստությամբ արհեստական մակերեսային հողային շերտ՝ սիզամարգերի և ծաղկային օջախների համար: Թփերն և ծառատեսակները տնկելու և նրանց կպչողականությունն ապահովելու համար նախատեսվում է ձեռք բերել 100մ^3 սևադող, որը տրամադրվելու է համայնքի կողմից:

Կանաչապատումը նախատեսվում է իրականացնել տարածաշրջանին և տեղի կլիմայական պայմանների բնորոշ ծառաթփային բուսականությամբ, մասնավորապես կանաչապատման համար կօգտագործվի՝

- Դեկորատիվ ակացիա – 40 հատ,
- Կանադական բարդի – 160 հատ,
- Կանադական կարմիր տեսակի բարդի – 20 հատ,
- Եղևնի – 20 հատ,
- Դեկորատիվ տուա – 25 հատ,
- Կլյոն – 7 հատ,
- Մրգատու ծառեր (կեռասենի, սալոր, դեղձ, ծիրանենի, խնձորենի) - 240 հատ,
- Վարդ – 100 հատ,
- Մարժևնիք – 10 հատ,
- Սամշիթ – 30 հատ,
- Մարգախոտ:

Կանաչապատ տարածքների ոռոգումը կիրականացվի ոռոգման ցանցի միջոցով: Ծառատեսակների համար կնախատեսվի կաթիլային ոռոգման համակարգ:

Կառուցապատման ենթակա տարածքը չի առընչվում Ջրվեժ համայնքի վարչական շրջանում գոյություն ունեցող մշակութային հուշարձանների և պահպանության ենթակա տարածքների հետ:

Գործունեության ենթակա տարածքում Կարմիր գրքում գրանցված կենդանիներ և բուսատեսակներ չեն հայտնաբերվել:

Նախատեսվում է շրջակա միջավայրի վրա հնարավոր ազդեցության բացառմանը, նվազեցմանն ու փոխհատուցմանն ուղղված բնապահպանական միջոցառումների ծրագիր, այդ թվում՝

- շինարարական աշխատանքների /փոշի առաջացնող աշխատանքներ/ ընթացքում անհրաժեշտ ջրցանի իրականացում,
- ջրցանի ծավալների հաշվարկվումն այնպես, որ բացառվեն մակերևութային հոսքերը և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակի պարբերաբար ստուգում,
- շինարարական նյութերի (հատկապես սորուն շինարարական նյութերի դեպքում, ինչպիսիք են ավազը, խիճը, հողը և այլն) փակ ծածկով մեքենաներով տեղափոխումը,
- սորուն նյութերի պահեստների ծածկում՝ համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կկանխարգելի փոշու տարածումը,
- աղմկահարույց աշխատանքների իրականացումը հնարավորինս օրվա ցերեկային ժամերին,
- տեխնիկական միջոցների և ավտոտրանսպորտի շարժիչների պարբերաբար ստուգում և կարգավորում՝ բացառելով անսարք վիճակում գտնվող մեքենաների օգտագործումը,

ՀՀ ԵՐԵՎԱՆ «ԷՆԻՍԵՅ» ՍՊԸ ՄԻՄՈՒՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՕՑԵՆԿԻ ՎՈԶԴԵՅՍՏՎԻЯ ՆА ОКРУЖАЮЩУЮ СРЕДУ
ՀԱՅԵՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ
ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION
OF EXPERTS
02543163

- թափոնների հավաքման վայրերի և հեռացման ուղիների նախապես որոշված լինելը՝ շինարարության արդյունքում գոյացող թափոնների բոլոր հիմնական տեսակների համար,
- շինարարական աղբի պատշաճ կերպով հավաքում և հեռացում՝ արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից:

Բազմաբնակարան բնակելի համալիրի շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում նախատեսվում է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանը կամ մեղմացմանն ուղված հետևյալ մշտադիտարկումները,

- մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի (փոշի, արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,
- փոշենստեցման նպատակով նախատեսվում է իրականացնել տարածքի ջրցանում տարվա շոգ և չոր եղանակներին՝ օրեկան 2-3 անգամ,
- տեխնիկական միջոցներից առաջացող օգտագործված յուղերով ու քսայուղերով հողերի աղտոտվածության մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,
- աղմուկի և թրթռումների մշտադիտարկումներ՝ երեք ամիսը մեկ հաճախականությամբ,
- կանաչապատման մոնիթորինգ:

Պատճառաբանական մաս. Կոտայքի մարզի Ջրվեժ գյուղի վարչական տարածքում, օրենսդրությամբ սահմանված կարգով, իրականացվել են հանրային քննարկումներ, որոնց ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինները և հասարակայնությունը հավանություն են տվել նախատեսվող գործունեությանը: Փորձաքննական գործընթացին մասնակցել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի, պաշտպանության նախարարությունները, քաղաքաշինության կոմիտեն և Կոտայքի մարզպետարանը: Ծրագրի իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները հիմնականում պայմանավորված կլինեն շինարարական աշխատանքների իրականացմամբ, որոնք կկրեն ժամանակավոր բնույթ և ազդեցությունները կլինեն թույլատրելի նորմայի սահմաններում:

Փորձաքննական պահանջներ

- Կառուցապատման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական պահանջների և միջոցառումների իրականացմանը՝ ըստ հայտով ներկայացված պլանի, իսկ դրանց չբավարարման դեպքում ներառել լրացուցիչ միջոցառումներ՝ պարտադիր պահպանելով բնապահպանական նորմերը:

- Կառուցապատման հետագա գործառույթներն իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի համաձայն, մասնավորապես՝ ՀՀ քաղաքաշինության նախարարի 2014 թվականի հոկտեմբերի 14-ի N263-Ն հրամանով հաստատված՝ «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» ՀՀՇՆ30-01-2014 շինարարական նորմերի համաձայն՝ պահպանելով շինհրապարակի աշխատանքային անվտանգության կանոնները, բանվորների արտահագուստի և հիգիենայի պահանջները:

02543163
ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ЗАКЛЮЧЕНИЕ ЭКСПЕРТИЗЫ
COMMISSION OF EXPERTS

- Շինարարական աշխատանքների ընթացքում առաջացող թափոնների կուտակումն ու հեռացումն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Կոտայքի մարզի Ջրվեժի համայնքապետարանի հետ համաձայնեցված:

- Անհրաժեշտ է ապահովել հայտում ամրագրված կանաչապատման աշխատանքների իրականացումը և պահպանումը:

- ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N 438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազորված մարմնին՝ համապատասխան պահպանական միջոցառումներ իրականացնելու համար:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Էյ Սի Գրուպ» ՍՊ ընկերության կողմից ներկայացված Կոտայքի մարզի Ջրվեժ գյուղում նախատեսվող Սմարթ Սիթի բնակելի թաղամասի կառուցման շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

Տնօրենի տեղակալ՝ Գ. Գևորգյան

Մասնագետ՝ Հ. Մեսրոպյան